Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
հունիսի 5-ի N 716-Ա որոշման

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ. ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ
ՀԱՄԱԼՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔ

Սույնով հղում է արվում «Ռեսուրսների ավելացում. քսանմեկերորդ համալրման մասին» Միջազգային զարգացման ընկերակցության (ընկերակցություն) Կառավարիչների խորհրդի՝ 2025 թվականի ապրիլի 15-ի թիվ 255 որոշմանը (որոշում)։

Որոշման 2-րդ պարբերության համաձայն՝ սույնով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ծանուցում է ընկերակցությանը, որ այն կիրականացնի իրեն լիազորված բաժանորդագրությունը[1] 910,000 հատուկ փոխառության իրավունքի չափով[2]՝ որոշման դրույթներին համապատասխան։

_____ _____[3]

(ամսաթիվ) (անուն և պաշտոն)

[1] Հանձնառության գործիքի այս ձևը կարող է օգտագործվել ինչպես անդամ պետության կանոնավոր բաժանորդագրության, այնպես էլ պարտքի մարմանն ուղղված ցանկացած լրացուցիչ աջակցության համար՝ առանձին կամ համատեղ գործիքի ներքո։

[2] Համաձայն «Քսանմեկերորդ համալրման մասին» որոշման 5(բ) կետի, որոշման 3(բ) կետում նշված անդամ-պետությունները պետք է իրենց բաժանորդագրությունն արտահայտեն ՀՓԻ-ներով, անդամ պետության արժույթով, եթե վերջինս ազատ փոխարկելի է, կամ Ասոցիացիայի համաձայնությամբ՝ այլ անդամ երկրի ազատ փոխարկելի արժույթով։ Վճարումը կիրականացվի որոշման 5(բ) կետով սահմանված կարգով։ Այն անդամների համար, որոնք նշված են որոշման 3(ա) կետում, վճարումը կիրականացվի որոշման 5(ա) կետով սահմանված կարգով։

[3] Հանձնառության գործիքը պետք է ստորագրվի Կառավարության անունից՝ պատշաճ կերպով լիազորված ներկայացուցչի կողմից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

05.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ